

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԷԴՈՒԱՐԴՈ ՍԵՖԵՐՅԱՆԻՆ

ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՒՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՄՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԷԴՈՒԱՐԴՈ ՍԵՖԵՐԵԱՆ, ՈՐ Ի ԲՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ, ԱՐԳԵՆՏԻՆԱ

Յարգարժան պրն Սեֆերեան,
Գոհունակութեամբ պեղեկացանք Ձեր ծննդեան փարեղարձի առիթով Ձեզ նուիրում գրքի պատրաստութեան մասին: Ուրախալի այս առիթով Նայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում հաւաքատը հայորդոյդ համագգային մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Մեր հոգում փակալին թարմ են Արգենտինայի հայոց թեմ կապարած Նովուպետական այցելութեան ընթացքին Ձեզ հետ Մեր հանդիպման բարի յուշերը, երբ առիթ ունեցանք անձնապէս ճանաչելու Ձեզ եւ ի մոտոյ ծանօթ դառնալու Արգենտինայում եւ Մայր Նայրենիքում կեանքի կոչած Ձեր եկեղեցանուէր ու ազգօգոյ գործերին:

Տասնեակ փարիներ Դուք ազնիւ նուիրապոյութիւններով Ձեր աջակցութիւն էք բերում մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան իրականացմանն ու Աստուածակառոյց Մայր Աթոռիս շինութեանն ու պայծառութեանը: Այսօր Վեհարանի մարմարեայ փախարակին արձանագրում մեր Եկեղեցու պատուարժան բարերարների անուանաշարքում արժանիօրէն գեւորեալ է Ձեր անունը՝ ի պես բոլոր այցելուների: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին միշտ շէն ու պայծառ պետնելու Ձեր նախանձախնդրութիւնը եւ Սուրբ Էջմիածնի հանդէպ Ձեր որդիական նուիրումը արժանացրել են Ձեզ մեր Եկեղեցու պատուոյ բարձրագոյն «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանին, որը մեր Եկեղեցու ու հաւաքատը ժողովրդի գնահատանքն է Ձեզ, շնորհում ձեռամբ երջանկայիշարակ Վազգէն Ա Ամենայն Նայոց Կաթողիկոսի:

Խորը գոհունակութիւն է Նայրապետիս համար, որ մեր հանդիպման ընթացքին վերըստին ազնւօրէն հասարարեցիք Ձեր պատրաստակամութիւնը շարունակելու Նառիճավանքի նորոգութեան ու բարեկարգման հովանաւորութիւնը՝ յատեղեալով Ձեր անունը որպէս միջնադարեան այդ շքեղակառոյց համալիրի բարերար: Այլեւս նաեւ Ձեզ համար է «Երանի Եկեղեցի շինողաց» մաղթանքը, որ դարեր շարունակ առ Աստուած է բարձրանում ու պիտի շարունակի բարձրանալ հայորդեաց երախտագէտ հոգիներից:

Յարգարժան պրն Սեֆերեան, շնորհաւորելով Ձեզ Ձեր ծննդեան փարեղարձի առիթով, ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին պարգևի բաջառողջութիւն, երջանիկ կեանքի երկար օրեր եւ եկեղեցաշէն գործերի նորանոր յաջողութիւններ:

Մեր մաղթանքն է նաև, որ Բարձրեալ Տէրը զօրացնի համայն մեր ժողովրդի եկեղեցասիրութեան եւ հայրենասնուիրումի ոգին՝ Իր հանապազ հովանու ներքոյ միշտ առաջնորդելով մեծարժան գործերի:

Ողջ լևրուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգոյն եւ յաւեր օրինեալ ի Մէնջ սամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 29-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 496